Խոյեցիների ու Նախիջևանցիների արշավանքից հետո Երևանի խանը, հակառակ իր սյուզերեն Հերակլ II-ի կամքի, արշավում է Նախիջևանի վրա, բայց վաղաժամ ցրտերը ստիպում են նրան ձեռնունայն վերադառնալ[5]։ Շատ չանցած՝ 1791 թ. դեկտեմբերին Ղարաբաղի Իբրահիմ և Ավարայի Օմար (Ումմա) խաների արշավանքը Նախիջևանի վրա դրդում է Երևանի, Նախիջևանի ու Խոյի խաներին մոռանալ իրենց նախկին թշնամությունը և համատեղ ուժերով հաջողությամբ դիմադրել հարձակվողներին, հարձակում, որը մեծամեծ վտանգներով էր հղի ոչ միայն Նախիջևանի, այլև նրա սահմանակից Երևանի ու Խոյի խանությունների համար։

Պահպանվել և լավ վիճակում մեզ են հասել Ղուկաս Կարնեցու այս «Պատմութեան» թե՛ բնագիրը[6], և թե՛ սևագիր օրինակը[7], որոնց միջև տարբերություններ չկան, չհաշված այն, որ ընդունված սովորության համաձայն, սևագրի վրա նշված չէ ամսաթիվը, դա արվում էր նամակը մաքրագրելու և առաքման ժամանակ։ Ղուկաս Կարնեցու այս նամակը փոքր ինչ չափով օգտագործված է Հ. Շահխաթունյանցին վերագրված պատմական երկի 1-ին մասում, ինչպես նաև մեր «Երևանի խանությունը XVIII դարի վերջում» աշխատության մեջ[8]։

Պատմութիւն զալստեան Խոյեցւոց և Նախչուանցւոցն յերկիրս Երևանու, և վնասուցն զոր անցուցին ընդ սա և ընդ սուրբ Աթոռս

Ծանիր ցաւակից սիրելիդ մեր Մինաս զգօնամիտ վարդապետ[9]։ Քանզի, որպէս յառաջ գրեցաք սիրելւոյդ, մանուկ խանն[10] մեր, լուեալ թէ Խոյու խանի եղբայր Ջաֆարղուլի բէկն[11] զօր գումարեալ գայ ի վերայ երկրիս, և ևս թէ՝ Նախչուանու խանն[12] ապատամբեալ է յինքենէ, սա ևս զօր ժողովեալ գնաց ընդդէմ նոցա։ Ի հասանիլ սորա ի Տիգա ամրոցն, որ է ի սահման երկրին Նախչուանու, մարտ էր եղեալ ընդ ամրոցին, բայց ոչ կարացեալ վնաս ինչ հասուցանել ամրացելոցն, յիւրոց զօրացն բազումք հարեալք էին։ Յայնժամ այնու ձախորդութեամբ տարակուսեալ գոլով, լուեալ էր ևս թէ Ջաֆարղուլի բէկն և Նախչուանու Քեալպալի խանն միաբանեալ ծանր զօրօք գան ի վերայ իւր։ Ուստի երկուցեալ դարձաւ անտի և եկեալ յԵրևան ի Մուխանննաթ թափայն,

---

5 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 287ա, 336բ։

6 Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 189։

7 Նույն տեղում, ձեռ. № 4501, էջ 284ա—284բ։

8 «Դիւան հայոց պատմութեան», հ. Ա—Բ, Թիֆլիս, 1893, էջ 18—23։ Վ. Ռ. Գրիգորյան, «Երևանի խանությունը XVIII դարի վերջում», Երևան, 1958, էջ 143—147։

9 Մինաս վարդապետը «Մեծին Պօլսոյ և շրջակայիցն նուիրակ»-ն էր («Դիւան հայոց պատմութեան», հ. Դ, էջ 534), որի հետ Ղուկասը նամակագրական աշխույժ կապի մեջ էր, և որին ուղղված նրա նամակներից մի քանիսը հրապարակված են «Դիւան»-ի Դ հատորում։

10 Խոսքը վերաբերում է Երևանի Մուհամադ խանին (1772—1805 թթ.), որն իշխանության էր անցել իր եղբոր՝ Ղուլամ Ալիի սպանությունից հետո (1784 թ. 7 հունիսի) և նկարագրված անցքերի ժամանակ 18 տարեկան էր։

11 Խոյի Ահմեդ խանի որդին էր, որ հոր սպանությունից հետո (1786 թ. փետրվար) իր ավագ եղբոր՝ Հուսեյնի հետ միասին մասնակցում էր երկրի կառավարմանը։ Հետագայում դառնում է Խոյի խան։

12 Նախիջևանի խանն էր Քյալբալին, որը հետագայում ամուսնանում է Երևանի Մուհամադ խանի քրոջ հետ և 1797 թ. Աղա-Մուհամադ խանի կողմից կուրացվելուց հետո տեղափոխվում է Երևան, իր ազգականների մոտ, և ակտիվորեն մասնակցում երկրի քաղաքական կյանքին (տես՝ Акты, собранные Кавказской археографической комиссией, т. 1, Тифлис, 1866, էջ 158)։